ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-25/14 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի օգոստոսի 13-ին կնքված N ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-25/14 ծածկագրով պայմանագրում 2025 թվականի օգոստոսի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի և «ԱՍ ՕՅԻԼ» ՍՊԸ-ի միջև կնքված ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-25/14 ծածկագրով Պայմանագրի շրջանակում 2025 թվականի օգոստոսի 15-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել են ապրանքի ձեռքբերման դիմաց վճարման ժամանակացույցները՝ համաձայն՝ 2025 թվականի օգոստոսի 15-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2025 թվականի օգոստոսի 13-ին կնքված N ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-25/14 ծածկագրով պայմանագիրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ**